Պատմություն և մշակույթ 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.267

The Threat of Destruction of Cultural Objects of Unrecognized Countries on the Example of the Republic of Artsakh

Gayane Petrosyan
https://orcid.org/0000-0003-3763-2303
Russian-Armenian University, senior lecturer
gayane.petrosyan@rau.am

Sona Melkumyan
https://orcid.org/0009-0002-5026-0719
Russian-Armenian University, Master's student
sonmelkumyan77@gmail.com

Keywords: unrecognized states, cultural genocide, cultural objects, the Republic of Artsakh, NKR.

There are more than 20 countries in the world that aren't internationally recognized. Along with the legal and economic problems, unrecognized states face the threat of cultural independence. In the context of interregional conflicts, global crises, cultural objects of unrecognized states are being destroyed. In this article the object of the study is the cultural heritage of Artsakh, which was and is being destroyed by the Azerbaijani forces after the war of 2020. This article considers ways to prevent the destruction of cultural property of unrecognized countries and the role of international organizations, the purpose of whose activities is to preserve and develop cultural and humanitarian interactions.

Մշակութային կոթողների ոչնչացման սպառնալիքները չճանաչված պետություններում Արցախի օրինակով

Գայանե Պետրոսյան
Հայ - ռուսական համալսարան, ավագ դասախոս

Սոնա Մելքումյան
Հայ - ռուսական համալսարան, մագիստրատուրայի ուսանող

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 267-274

Received: 14.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 17.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Մշակութային կոթողների ոչնչացման սպառնալիքները չճանաչված պետություններում Արցախի օրինակով

Հիմնաբառեր՝ չճանաչված պետություններ, մշակութային եղեռն, մշակութային օբյեկտներ, Արցախի Հանրապետություն, ԼՂՀ:

Աշխարհում գոյություն ունեն քսանից ավելի երկրներ, որոնք միջազգայնորեն ճանաչված չեն: Չճանաչված և մասնակի ճանաչված պետությունները հաճախ են հայտնվում միջազգային, միջտարածքային կոնֆլիկտների կիզակետում, որոնք այդ պետությունների անորոշ ստատուսի հետևանք են: Միաժամանակ՝ շարունակական ռազմական գործողությունների արդյունքում այս երկրները առերեսվում են քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային բազմաթիվ խնդիրների, ոչնչացվում են չճանաչված պետությունների մշակութային կոթողները:

Угроза уничтожения культурных объектов непризнанных стран на примере Республики Арцах

Гаянэ Петросян
Российско-Армянский Университет, старший преподаватель

Сона Мелкумян
Российско-Армянский Университет, студент магистратуры

Ключевые слова: непризнанные государства, культурный геноцид, культурные объекты, Республика Арцах, НКР.

В мире существуют более 20 стран, которые не имеют международного признания. В связи со многими проблемами, которые включают правовые и экономические аспекты, непризнанные государства стоят ещё и перед угрозой сохранения культурной независимости. В условиях межрегиональных конфликтов, глобальных кризисов, культурные объекты непризнанных стран неоднократно подвергаются разрушению.

В данной статье рассматривается культурное наследие Арцаха, которое подверглось и подвергается уничтожению со стороны азербайджанских властей после войны 2020 года. В статье также рассматриваются пути предотвращения уничтожения культурных ценностей непризнанных стран и роль международных организаций в этом процессе, целью деятельности которых является сохранение и развитие культурно-гуманитарных взаимодействий.

* * *

Ներածություն: Միջազգային հարաբերությունները ենթադրում են խնդիրների լուծման մեխանիզմներ տարբեր ոլորտներում՝ տնտեսություն, մշակույթ, միջազգային անվտանգություն: Միջազգային հարաբերությունների օբյեկտներ համարվում են սուվերեն պետությունները, սակայն վերոնշյալ ոլորտային խնդիրները ծագում են ոչ միայն միջազգայնորեն ճանաչված տարածքներում, տնտեսական և քաղաքական բազմաթիվ ասպեկտներ կապված են չճանաչված պետությունների հետ:

Աշխարհում բազմաթիվ են քաղաքական միավորները, որոնք հռչակել են իրենց առանձին պետություններ, սակայն ոչ բոլորն են համարվում չճանաչված պետությունները. չճանաչված

պետությունները ունեն կայուն ղեկավարման համակարգ, որն իրականացվում է կոնկրետ տարածքի վրա, սակայն նրանց անկախությունը չեն ճանաչում սուվերեն պետությունները [Братерский, *2021, 204-206*]: Կան նաև մասնակի չճանաչված պետություններ, որոնք ճանաչված չեն ՄԱԿ-ի կողմից, սակայն ճանաչվել են ՄԱԿ-ի անդամ հանդիսացող մի շարք երկրների կողմից: Չճանաչված պետությունների առաջացման պատճառները տարբեր են. դրանք կարող են ձևավորվել բազմազգ երկրներում, հիմնականում անջատողական շարժումների արդյունքում[Соколов, *2013, 25-26]*: Չճանաչված պետությունների ձևավորման և գոյության հարցում միջազգային իրավունքը չի տալիս կոնկրետ սկզբունքներ, այս դեպքում չճանաչված պետությունների առաջացման պրոցեսում ի հայտ են գալիս երկու ասպեկտներ. մի կողմից՝ յուրաքանչյուր ազգ ունի ազգային ինքնորոշման իրավունք, իսկ մյուս կողմից էլ՝ անջատողական ցանկացած շարժում հակասում է տարածքային ամբողջականության սկզբունքին: Պետությունների ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցության ասպեկտներից մեկը 1970 թ. միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում ամրագրված անվտանգության կլաուզուլան է [Saving Clause], որը պաշտպանում է պետություններին չհիմնավորված անջատողական ձգտումներից: Մասնավորապես նշվում են 3 պայմաններ, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում պետության տարածքային ամբողջականության խախտումը.

1. պետությունը պետք է իր գործողություններում պահպանի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը,
2. պետք է ունենա ողջ ժողովրդին ներկայացնող կառավարություններ,
3. չպետք է դրսևորի որևէ խտրականություն [Գալստյան, *2021, 22]*:

Մեծ հաշվով, ժողովուրդների ինքնորոշման իրավունքը չունի որևէ նորմատիվ ուժ և այն ստորադաս դիրք է զբաղեցնում տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ:
Տարածքի արդյունավետ կառավարման, քաղաքական և տնտեսական համակարգի բազմաթիվ հարցերի կողքին՝ չճանաչված պետություններում հարվածի տակ է գտնվում մշակույթը, և մշակութային օբյեկտները առանձնահատուկ պաշտպանության կարիք ունեն: Չնայած որ այս երկրները բազմաթիվ բնորոշումներով նման են սուվերեն պետություններին, միայն դիվանագիտական ճանաչման բացակայությունը թույլ չի տալիս ներկայանալ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ: Միաժամանակ դա չի նշանակում, որ չճանաչված պետությունները չունեն զարգացման և ինքնապաշտպանության ներքին ռեսուրսներ:

Արցախի Հանրապետությունը, որպես չճանաչված պետություն, դադարեցրեց իր գոյությունը 2024 թվականի հունվարի 1-ից այս տարածքներից հայ բնակչության բռնի տեղահանության արդյունքում [Սամվել Շահրամանյանի հրամանագիրը]: Այն իրավիճակը, որ Արցախը չէր համարվում միջազգային իրավունքի սուբյեկտ և չուներ միջազգային հանրության վրա ազդելու մեխանիզմներ, երկրում մշտապես առաջացրել է մշակութային արժեքների ոչնչացման ռիսկեր, իսկ այժմ, երբ տվյալ մշակութային արժեքների կրողները այլևս Արցախի տարածքում չեն, կոթողների պահպանման գործընթացը սկսեց կրել առավել բարդ բնույթ:

Քանի որ Արցախը հռչակել է իր անկախությունը 1991 թվականին, չճանաչված պետությունների ձևավորման դասակարգման մեջ Արցախի առաջացումը կապում են ԽՍՀՄ-ի անկման հետ, երբ ձևավորվեցին նոր սուվերեն պետություններ նախկին սովետական

հանրապետությունների տեղում [Барсегов 2008, 16]: Սակայն Արցախի անկախացման հռչակումը արդյունք է առավել տևական պայքարի, որը սկսել էր դեռևս ԽՍՀՄ-ի ձևավորումից առաջ: Երբ 1918 թ.-ին իրենց անկախությունը հռչակեցին կոնֆլիկտի երկու կողմերը՝ Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը, սկսվեցին հայկական տարածքներին տիրանալու թուրք-ադրբեջանական ջանքերը: Տարածքային այս կոնֆլիկտները փոխանցվեցին նաև Հայաստանի ու Ադրբեջանի Խորհրդային Հանրապետություններին: 1921 թվականին Ստալինի անմիջական ճնշմամբ և ընթացակարգային խախտումներով ընդունվեց որոշում՝ անջատել Լեռնային Ղարաբաղը Հայաստանից և միացնել Խորհրդային Ադրբեջանին, պայմանով, որ հայկական այս տարածքներում կձևավորվի ազգային ինքնավար մարզ՝ լայն իրավունքներով: Սակայն ինքնավար մարզի կազմում այնուամենայնիվ ընդգրկված չէին այն տարածքների մեծ մասը, որոնք ի սկզբանե Ազգերի Լիգայի կողմից համարվում էին վիճելի [«Республика Арцах: история и современность»]:

Իր դարավոր պատմության ընթացքում Արցախի մշակութային ժառանգությունը չի ենթարկվել այդ աստիճան վանդալիզմի, որքան Խորհրդային Ադրբեջանի ղեկավարման տարիներին: Ադրբեջանը նպատակադրվել էր անել ամեն ինչ, որ պաշտոնական հրատարակություններում, ուղեցույցերում չհիշատակվեն հայկական մշակութային կոթողները, վերջիններս ոչնչացվում էին կամ վերափոխվում մուսուլմանական կառույցների, խոչընդոտվում էին կոթողների ուսումնասիրության, վերականգնման ցանկացած փորձեր խորհրդային և արտասահմանցի գիտնականների կողմից:

Ադրբեջանի կողմից հայկական վանքերի և եկեղեցիների քանդման դրդապատճառը ոչ միայն հոգևոր ու նյութական մշակույթի ոչնչացումն էր, այլև պետական մակարդակով թելադրվող աթեիզմը Խորհրդային Միությունում: Եկեղեցիները հարկադրաբար փակվում էին, հոգևորականները՝ ենթարկվում ճնշումների: Արցախի եպիսկոպոս Վրթանեսը կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանին ուղղված իր նամակում նշում է Արցախում այդ ժամանակ [1931 թ.] գործող եկեղեցիների թիվը, որը կրճատվել էր՝ հասնելով 112-ի: 1932 թվականին էլ եպիսկոպոսը աքսորվեց Սիբիր, որից հետո փակվեցին հայկական բոլոր եկեղեցիներն ու վանքերը [Пономарёв, 2011, 137]:

1991-ին Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախություն՝ հիմնվելով 1990 թվականի ապրիլի 3-ի խորհրդային օրենքի վրա, որը իրավունք էր տալիս ազգային ինքնավարություններին խորհրդային երկրի՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու պարագայում ինքնուրույն որոշում կայացնել սեփական պետական ստատուսի վերաբերյալ [«Республика Арцах: история и современность»] : Այս գործընթացին հետևեց պատերազմ:

Ռազմական կոնֆլիկտի ընթացքում ադրբեջանական ուժերը շարունակաբար ոչնչացնում էին Արցախի մշակութային կոթողները՝ նպատակ ունենալով վնաս հասցնել հայկական մշակութային արժեքներին և դրանով նպաստելով Արցախի հայ բնակչության դեպոպուլյացիային: Սա կրկնվեց նաև 44-օրյա պատերազմի ընթացքում: Պատերազմից հետո Արցախի հայկական մշակութային արժեքների ոչնչացման սպառնալիքները մեծացան, քանզի այս տարածքները պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների արդյունքում անցան Ադրբեջանի գերակայության տակ: Բայց անգամ պատերազմից հետո իրավիճակը այլ էր, որովհետև այն

տարածքներում, որտեղ գտնվում էին մշակութային կոթողները, ապրում էր այդ մշակույթը կրող ժողովուրդը, իսկ արդեն էթնիկ զտումից հետո Ադրբեջանի համար չմնաց որևէ խոչընդոտ հողին հավասարեցնելու հայկական ժառանգությունն Արցախում: Հենց 2023 թ.-ի սեպտեմբերի 19-ին, երբ ադրբեջանական ուժերը սկսեցին հարձակումը, Լեմկինի անվան Ցեղասպանության կանխարգելման ինստիտուտը ներկայացրեց SOS ահազանգ՝ նշելով, որ չկա որևէ կասկած, որ այն ինչ տեղի է ունենում Արցախում՝ 9 ամիս տևած բլոկադան, սովը, բնակելի շրջանների ռմբակոծումը, ոչ այլ ինչ է, քան ցեղասպանություն [SOS-Artsakh/ Lemkin Institute for Genocide Prevention]: Այս գործողություններին հաջորդեց նաև մշակութային ցեղասպանության իրականացումը:

Գոյություն ունեն միջազգային բազմաթիվ կառույցներ, կոնվենցիաներ, որոնց նպատակը այն մշակութային արժեքների պահպանումն ու վերականգնումն է, որոնք ռազմական գործողությունների պատճառով գտնվում են ոչնչացման ռիսկի տակ: Շատ հաճախ ռազմական կոնֆլիկտները ի հայտ են գալիս չճանաչված պետությունների անորոշ ստատուսի արդյունքում, իսկ այս դեպքում չճանաչված պետությունների շահերը կարող են պաշտպանել միջազգային կազմակերպությունները: Քանզի մեր ուսումնասիրման օբյեկտը մշակույթն է, մենք կանդրադառնանք ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեությանը, որի նպատակն է ամուր կապեր հաստատել տարբեր ազգերի միջև՝ դրանով նպաստելով մշակութային բազմազանության ընկալմանն ու ընդունմանը [Костюкова, 2016, 113]:

Ադրբեջանի գործողություններն Արցախում դատապարտելի են համաձայն Հաագայի կոնվենցիայի՝ զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին, ի դեպ որն ընդունած պետություններից է հենց ինքը: Համաձայն այդ կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց, ինչպես նաև մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից [Կոնվենցիա զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին]: Այն, որ Լեռնային Ղարաբաղը, որպես չճանաչված պետություն, չի համարվում կոնվենցիայի կողմ, դեռ չի նշանակում, որ այս տարածքներում գտնվող մշակութային արժեքները չպետք է պաշտպանված լինեն: 19-րդ հոդվածում, որը վերաբերում է միջազգային բնույթ չունեցող ընդհարումներին, հստակ շարադրված է, որ միջազգային բնույթ չունեցող և Բարձր պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ծագող զինված ընդհարման դեպքում ընդհարմանը մասնակից յուրաքանչյուր կողմ պարտավոր է կիրառել սույն Կոնվենցիայի՝ առնվազն մշակութային արժեքների հարգմանը վերաբերող դրույթները: Այս դեպքում այն փաստը, որ Արցախը չուներ միջազգային ճանաչում, չէր բացառում ռազմական ընհարման ժամանակ մշակութային կոթողների պաշտապնությանն ուղղված քայլերի ձեռնարկումը:

Ադրբեջանի կողմից իրականացված մշակութային ցեղասպանության բոլոր ակտերը դատապարտելի են համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիայի՝ *մշակութային եվ բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին: Հայաստանն ու Ադրբեջանը, լինելով ՄԱԿ-ի անդամ-պետություններ, միաժամանակ համարվում են նաև վերոնշյալ կոնվենցիայի*

կողմեր և ունեն համապատասխան պարտավորություններ: Համաձայն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի մասնակից յուրաքանչյուր պետություն ընդունում է իր տարածքում գտնվող մշակութային ու բնության ժառանգության հայտնաբերումը, պաշտպանությունը, պահպանությունը, հանրամատչելի դարձնելը և ապագա սերունդներին հանձնումն ապահովելու պարտավորությունը դրվում է նախ և առաջ իր վրա: Իսկ համաձայն *6-րդ հոդվածի* ՝ լիովին հարգելով այն պետությունների ինքնիշխանությունը, որոնց տարածքում գտնվում է մշակութային և բնության ժառանգությունը և, չխոչընդոտելով ազգային օրենսդրությամբ նախատեսված սեփականության իրավունքին՝ սույն Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ այն համընդհանուր ժառանգություն է, որի պաշտպանությունը միջազգային ողջ հանրության պարտքն է [Կոնվենցիա մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին]:

Մշակութային կոթողների պաշտպանության համար համագործակցությունն առավել իրատեսական կլիներ, եթե դրանք ներառված լինեին Համաշխարհային ժառանգության վտանգված օբյեկտների ցանկում, սակայն Արցախի մշակութային արժեքների ներառումը չի իրականացվել Արցախի անորոշ ստատուսի պատճառով: Իրավիճակից օգտվելով՝ պատերազմից հետո Ադրբեջանը փորձում էր ներկայացնել Շուշին որպես մուսուլմանական աշխարհի մշակութային կենտրոն՝ նպատակ ունենալով կոծկել բազմաթիվ ավերածությունները, որոնք իրականացվում էին քաղաքում: Պատերազմից հետո հայտարարվեց Ղազանչեցոց եկեղեցու՝ իբրև թե վերականգնման մասին, սակայն դա վերականգնություն չէր, այլ հերթական վանդալիզմը[«По поводу азербайджанских «восстановительных работ» в храме Сурб Аменапркич Казанчецоц в Шуши»]: Դատելով վերոնշյալ հոդվածների բովանդակությունից՝ Ադրբեջանը որպես Կոնվենցիայի անդամ-պետություն պարտավոր է պաշտպանել մշակութային օբյեկտները, որոնք գտնվում են իր տարածքում և համարվում են համամարդկային ժառանգություն:

Ղազանչեցոց եկեղեցին անօրինական վերականգնումների միակ օրինակը չէ: Արբանյակային տեսագրություններում, որոնք հրապարակվել են Caucasus Heritage Watch-ի կայքում 2021թվականի հոկտեմբերի 11-ին, երևում է, որ Ադրբեջանը քանդել է Հադրութի շրջանի Մոխրենես գյուղի Սբ. Սարգիս եկեղեցին [New activity at St. Sargis of Mokhrenes]: 2021-ին Հաագայի միջազգային դատարանը պարտավորեցրել էր Ադրբեջանին զերծ մնալ մշակութային արժեքների ցանկացած ոչնչացումից, ներառյալ նաև ոչ նյութական արժեքները: Եկեղեցու ոչնչացման վերաբերյալ զեկույց ներկայացվեց նաև Եվրոխորհրդարանում՝ <<Կովկասյան ժառանգություն>> անվամբ: Վերջինս ներառվեց նաև «Մշակույթի և միջազգային մշակութային հարաբերությունների նոր եվրոպական օրակարգի» զեկույցում [Ադրբեջանը ոչնչացրել է Մոխրենեսի Սբ.Սարգիս եկեղեցին] :

Ղազանչեցոց, Սուրբ Սարգիս, Քարինտակի Սուրբ Աստվածածին, Մեխակավանի Զորավոր Սբ. Աստվածածին եկեղեցիների հետ մեկտեղ, վանդալիզմի են ենթարկվում նաև հուշարձաններ, դպրոցներ, մշակույթի տներ, միայն Շուշիում ոչնչացվել են երկրաբանական թանգարանը և Կերպարվեստի թանգարանի <<Քանդակների պուրակը>>, իսկ Վերածննդի հրապարակի պետական շենքերի ոչնչացումով Ադրբեջանը ջնջում է Արցախի՝ որպես պետության, թեկուզ և չճանաչված, բայց դե-ֆակտո գոյության որևէ հետք [Ադրբեջանը շարունակում է Ստեփանակերտի

ապահայկականացման գործընթացը]։ Արձագանքելով մշակութային ցեղասպանության ակնհայտ գործողություններին 2022 թվականին Կարմիր դրոշի ահազանգով հանդես եկավ Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը։ Հայտարարության մեջ նշված էր. «Լեմկինի ինստիտուտը կոչ է անում բոլոր միջազգային և պետական մարմիններին վերահսկել Թուրքիայի և Ադրբեջանի ցեղասպան գաղափարախոսությունը և գործելակերպը, ճնշում գործադրել Թուրքիայի և Ադրբեջանի վրա՝ դադարեցնելու հայ ժողովրդի դեմ ուղղված իրենց ցեղասպանական սպառնալիքները և ամրապնդելու հայերի և հայկական ինքնության անվտանգությունը Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության տարածքներում և հայկական համայնքներում>> [«Красное предупреждение: Азербайджан продолжает политику ненависти по отношению к армянам»].: Նմանատիպ հայտարարությունները սկսեցին պարբերաբար թարմացվել՝ կապված բլոկադայի, հումանիտար ճգնաժամի և պարտադրված արտագաղթի վերաբերյալ [Red Flag Alerts for Genocide]:

Կապված և՛ խաղաղ իրավիճակում, և՛ ռազմական գործողությունների ընթացքում մշակութային կոթողների ոչնչացման վերաբերյալ միջազգային իրավունքի փորձի հետ, ներկայացվեցին բոլոր այն կոնվենցիաները, համաձայն որոնց վեր են հանվում Ադրբեջանի կողմից իրականացված և միջազգային նորմերը խախտող բազմաթիվ օրինակները։ Սակայն այստեղ հարց է առաջանում. ի՞նչ մեղադրանքներ են սահմանվում միջազգային կոնվենցիաների հոդվածների խախտման դեպքում և ո՞ր մարմիններն են իրավասու կիրառել դրանք։ Սա հասկանալու համար իրականացված խախտումները պետք է դիտարկել միջազգային քրեական իրավունքի շրջանակներում։

Միջազգային քրեական իրավունքի խնդիրն է պատասխանատվության ենթարկել միջազգային իրավունքի նորմերը և սկզբունքները խախտողներին, իսկ արդարադատությունը իրականացվում է միջազգային դատարանների միջոցով։ 1998 թվականի հուլիսին ՄԱԿ-ի 120 անդամ-պետությունները ընդունեցին Հռոմի ստատուտը, որն էլ դարձավ իրավական այն հիմքը, որով գործելու էր մշտական միջազգային քրեական դատարան [ՕՕՀ, Международный уголовный суд]։ Նշենք, որ Ադրբեջանը չի ստորագրել Հռոմի ստատուտը, սակայն դա չի նշանակում, որ վերջինիս գործողությունները չեն կարող պատժվել համաձայն միջազգային իրավական նորմերի. բացի այդ ստատուտի 4-րդ հոդվածի համաձայն դատարանի գործառույթները և լիազորությունները չեն սահմանափակվում միայն անդամ պետությունների տարածքով, դրանք կարող են իրականացվել նաև ցանկացած այլ երկրի տարածքում, եթե կա համաձայնություն։ Հռոմի ստատուտի բազմաթիվ հոդվածներով, որոնք վերաբերում են ցեղասպանության իրականացմանը, մարդկության նկատմամբ հանցագործություններին և ռազմական հանցագործություններին, կրկին վեր են հանվում Ադրբեջանի կողմից իրականացված հանցավոր գործողությունները, որոնք որակվում են որպես հանցագործություն մարդկության դեմ, և որոնք ուղեկցվել են մշակութային վանդալիզմի բազմաթիվ ակտերով [Римский статут Международного уголовного суда]:

Միջազգային իրավական համակարգի այս բոլոր հոդվածներին զուգահեռ առանցքային նշանակություն ունի Արցախի չճանաչված ստատուսը. այսինքն Արցախը, որպես չճանաչված պետություն, չուներ հնարավորություն դիմելու միջազգային դատարան վերը նշված բոլոր հանցագործությունների առիթով, որոնք իրականացվեցին թե՛ պատերազմի ընթացքում և թե՛

դրանից հետո: Այս պարագայում կարևոր է Հայաստանի դերը: Վերջինս՝ որպես սուվերեն պետություն, բազմիցս դիմել է Հաագայի միջազգային դատարան՝ կապված Արցախում տիրող իրավիճակի հետ: Սակայն Միջազգային դատարանի ու նաև Եվրոխորհրդարանի արձագանքները սահմանափակվում են միայն քննադատող հայտարարություններով և տարեկան հաշվետվություններում Ադրբեջանի ցեղասպան գործողությունների արձանագրմամբ:

Ադրբեջանի գործողությունների անպատժելիությունը ընդգծում է այն բարդություններն ու խնդիրները, որոնք առաջանում են միջազգային իրավունքում նման խախտումների վերլուծման ժամանակ: Մեծ հաշվով, միջազգային նորմերը, որոնք վերաբերում են մշակութային ժառանգության պահպանությանը, ամբողջապես մշակված չեն, և դա ակնհայտ է դառնում այն ժամանակ, երբ հարցն առնչվում է չճանաչված պետություններին: Լեռնային Ղարաբաղի օրինակը բավական կոնկրետ և բազմակողմանիորեն ցույց է տալիս բոլոր բացթողումները, որոնք գոյություն ունեն միջազգային իրավական ակտերում, և խնդիրները, որոնք առաջանում են չճանաչված երկրներում մշակութային ինքնուրույնության պահպանման գործընթացում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ մշակութային ժառանգության պաշտպանությունը և այլ օբյեկտների արժեքը ողջ մարդկության համար կարող են դառնալ հիմք կոնֆլիկտների կանխարգելման և միջազգային ճանաչման համար: Ուստի առանձնակի ուշադրություն ենք դարձնում պետությունների չճանաչված ստատուսի վրա՝ ընդգծելով, որ այդ իրավիճակը հանդիսանում է մշակութային կոթողների պաշտպանության համար հիմնական խոչընդոտը: Չնայած այն հանգամանքին, որ միջազգային կազմակերպությունների գործունեությունը՝ կապված մշակույթի ոլորտի հետ, չի սահմանափակվում միայն ճանաչված պետությունների սահմաններով, այնուամենայնիվ միջազգային իրավական մեխանիզմներում կան բազմաթիվ անորոշ սկզբունքներ, որոնք խանգարում են որոշիչ քայլեր ձեռնարկել մշակութային ժառանգության պաշտպանության ուղղությամբ:

Գրականության ցանկ

Braterskiy M., Skriba A.S., Sapogova A.I., «Bor'ba za priznaniye ili povysheniye statusa: usloviya ustoychivosti i razvitiya nepriznannykh gosudarstv [na primere Yevrazii]», Vestnik mezhdunarodnykh organizatsiy, No 3, 2021.

Sokolov S., «Klassifikatsiya nepriznannykh i chastichno priznannykh gosudarstv mira», Zhurnal «Poznaniye stran mira: istoriya, kul'tura, dostizheniya», No 2, 2013.

Barsegov Y., «Nagornyy Karabakh v mezhdunarodnom prave i mirovoy politike», Moskva, 2008.

Kostyukova A., Kostyukova P., «Mezhdunarodnyye mezhpravitel'stvennyye organizatsii v oblasti zashchity kul'turnykh tsennostey», Zhurnal «Nauchnyye izvestiya», 2016.

«Konventsiya o zashchite kul'turnykh tsennostey v sluchaye vooruzhennogo konflikta», Gaaga, 14 maya 1954 goda.

«Konventsiya ob okhrane vsemirnogo kul'turnogo i prirodnogo naslediya», 16 noyabrya 1972 goda.

Monitoring kul'turnogo naslediya Artsakha. https://monumentwatch.org/en/.

Rimskiy statut Mezhdunarodnogo ugolovnogo suda, https://www.un.org/ru/law/icc.